րովը երթայ, որ դին տանին աչվըները։ Անպէս արեցին։ Բայց ըղսիրտը պահիլեն։ — Չին արիգըկուն տանը դիմաց կանինիլէ։

— Ասիլիմ, թէ մամամ կուտէ ըզգլոխա։ Դուս բերելով ըղմերածնուն եւ ողջերուն ջուրը, կի քըսէ անովը զոըղին բըռոըըած մարմինը ու ահա ողջաջուցիլէ զնա։

— Ինչ շատ քուն եղիլիմ կ'ասէ տղան։

— Ես ողջացուցիլիմ ըզքեզ։

Հիմպիկ ամէն բանը աղէկ եղած պիլար, նմա թէ չի ունացի սիրտ։

Առ թուխի[1] կերպարանք, կասէ արիգակը. ու գնա սի լառւշովը տուն։ Հոն առէս[2] ալ հարսնիք է։ Պի գնիին որ փչիս։ Քիչ մը պի փըչիս, անոր էտէվանց պասիս թէ, տան իք մը, ինչով քսիս ըղաղէքը։ Պի տան զքու սիրտդ ու գուն զան կուլ պիտաս։

Տըղան հետեւիլէ ըղխըրատը։ Տունը չին ճանչեցի զինքը։ Փըչիլէ։ Անոր ետեւվանց ձեռը տըւիլին ըղսիրտը։ Ինքը ետ դարձիլէ ապէս թէ[3] խորթէր[4] զլառւչին ու կուլ տըվիլէ ըղսիրտը։ Հիմպիկ շատ ըռինտ փըչիլէ։ Հարսը ու փեսան կի խաղար։

"Դիր վար ըղդի թուըը, մանի ատխա հուգ„[5] կասէ հարսը։

Փեսան կի հնազանդի։ Թուխը քիչ քիչէնը[6] կի մօտիկնայ թըռին, կի խըլէ զան, ու առաջը ըղմարը ու անոր էտավանց ըղուշարը կի բըռդըռտէ։

Անոր ետեւանց արիգըկուն մօտ գնացիլէ կենալու։

ՅՈՎՀ. ԱՆԾԻ

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ԻՐԱԿԱՆՈՒԹԻ՞Ն ԹԷ ԵՐԱԶ

Այսպէս ինչո՞ւ մոռցուի շուտով
Երգիչըն լուռ՝ ի շիրիմ զով....
Որուն երգեր հուր բոցավառ՝
Էին խոցեր սրտիս համար.....։

Նօճին, ուռին տրտմասաղարթ,
Եւ սոխակին ձայն անաղարտ,
Ցաւով հարցին ի մի բերան.
«Մոռցուեցաւ էր խեղճ Աղամեան։

Բեմին վերայ, ո՞վ դերասան,
Տփղիս, Պոլիս եւ Հնդաստան,
Գերմ զուսանին էր վեհ երգեր՝
Քնարին աղիք, ա՛լ չեն երգեր.....։

— — — — — — — — —
— — — — — — — — —

Թռաւ արեգակն.... Ծլաւ խաւար.
Բարձրացաւ լոյս լուսին ՚կամար
Տխուր բողոք քնարէն լըսեմ....
«Մոռցա՛ք, զուսանք, զԱղամ վըսեմ։» —

Սրտիս խորերն այս ձայն անցաւ,
Մինչեւ աղիքս խոցեց ի ցաւ։
Մ'ըսեց տարա՛ւ զիս ցուրտ դամբան
Ուր մութ եւ լուռ է ամէն բան.... ։

Նօճւոյն դնդղիւն եւ ծիծ բըւաց
Խըլզեն մեծ սուգն համատարած.....։
Յանկարծ տեսայ շիրմին նիզեր՝
Խայտալով ո՛ն օդ են թըռեր....

Պատանդականն ի դուրս ելաւ.....։
Է՛ր Աղամեան, ես ճանչցայ լաւ....
— Մահասարսափ թմբած ի սալառ՝
Կծկած դիտեմ՝ զօզ ընչասպառ....—

Ի ձեռին քնար, աչքերըն բաց՝
Փնտռէր ըզգուինդ դերասանաց....
Ցուրտ քարին վրայ նստաւ մինակ....
Լռեց քնութիւն, լու՛ռ մնաց սոխակ։

Ձայն, բայց չէր ձայն, լա՛լ, բայց չէր լաց —
«Մա՛նկանացո՛ւք, թըթռաց.... ձա՛յն, լա՛ց....
Մոռցաք ինչո՞ւ զիմ յիշատակ.
Զի հանգչիմ հօս ցուրտ հողին տակ։

Խառըշաչեցին ոսկին, բարտին,
Ծօճաց ցօղուն մեռեալ — վարդին....
«Մանկանացուաց բարք յեղյեղուկ....
Մոռցա՛ն ամէն կեանքըս եղո՛ւկ։»

— Լռիկ վառ հրաւ քնարն երազեայ
Վտիտ իւր ձեռք իբր մեռաղեայ...
Արտասուաթոր աչուըններէն
Արցունք՝ վտակ ի ջուրս կը բերեն...

Յանկարծ ոտեր ի վայր հակին
Ձայն լսուեցաւ, ձայն սոխակին....
«Գերմ Աղամեան ո՛ն մի դու լար.
Երեքաղեան տուր ինձ քո քնար.

Մուտ դու հանգչել ի գերեզման
Եմ քեզի միշտ ես դերասան.
Դայլայլիկովըս անդադար
Թառած՝ ծառոց բարձր ի կատար՝

Գիտի սուլեմ անզթաբար
Ազգին տղոց ականջն ի վար.
Մոռցաք, ինչո՞ւ, Ձեր դերասան....
Այն ննջէ նա ՚գերեզման.

Բայց կ'արտասուէ։ Դուք ապերախտ,
Ձեր Աղամեան մոռցաք դժբախտ։» —
— Երես պայծառ սիրտըն զըւարթ
Դարձաւ դամբան հանգչել հանդարտ.... — —

— Ի ծունր եկայ քով իւր շիրմին
Աղօթեցի աղօթք ջերմին։
Խոստմնակատար սոխակ սուրաց....
Զարթեայ քընէն՝ աչերս ուռած։

Հ. Դ. ՄԼԻՆ

---

[1] գնչու. — [2] այնպէս ալ, անանկ ալ. — [3] իբրեւ թէ. — [4] շափել, լաւցընել. — [5] երեք բառը եռեւէ եւեւ կը նշանակէ, մ'ըներ այսչափ խըլոտոց, վայնասուն. — [6] կամաց կամաց.